ՅՈՒՅԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի սուրբ և փառաւորեալ հրաշա(մինչև այստեղ մեծատառ երկաթագրով, մնացյալը նոտրգրով)լի և մեծապայծառ սրբոյ Մենաստանէս սրբոյն Աղբերկայ գերահրաշ սրբոց վանուց և յԱստածամուխ սարաափեկի սուրբ Բեներ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ ի գործելոյսարոյց սուրբ Նշանէս: Եւ յԱմէնօրհնեալ Աստուածածնի քաղցրահայեաց սքրբոյ Տաճարէ. Եւ յամենայ աստուածահաճոյ սրբոց հրաշազարդ Տաճարաց: Եւ ի ներ որոց ամփոփեալ մեծահրաշ սրբոց նշխարաց: Եւ ի սոցին սպասաւոր և պաշտօնեայ ի Տէր Մատթէոս մեղապարտ վարդապետ: Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան, նամակ պահպանութեան և շնորհք Առաքելական և Աստուածային բազմապատիկ օրհնութեան առ ընդհանուր ամենայն ազգս քրիստոնէից լուսաւորչադաւան հայկազուն սեռի՝ ուր և հասցէ նամակ օրհնութեան մերոյ, ի քաղաքս, ի գիւղս, ի վանս և յամենայն շէնս: Նախ Արհի է պանծալի եպիսկոպոսաց, Աստուածաբան վարդապետաց, պաշտօնասէր քահանայից, ուսումնասէր սարկաւագաց, Ատենազարդ դպրաց, Աստուածասէր իշխանաց և համայն տերամբ զօրացեալ ժողովրդոցն հայազգէից վերաբնակելոց յամենայն տեղիս, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և ամենայն չափու տիոյ և հասակի ի Քրիստոս Աստուած հաւատացելոցդ լիցի միշտ խնդալ յարազուարճ կենօք ամէն: ...

(Տրվում է այստեղ Աղբերկա վանքի պատմությունն և ապա խոսվում է հօգուտ վանքին կատարվելիք հանգանակության մասին):

... Արդ՝ ուրեմն աճա զայն սքանչելահրաշ սուրբ նշանն ընդ ձեռն գրամատոյց հայրապետիս եղբայր մերոյ Ռափայէլ շնորհազարդ վարդապետին առաքեցաք առ բարեպաշտ աստուածասիրութիւն ձեր, վասն որոյ սիրով սուրբ հոգւոյն և աստուածային օրհնութեամբն ծանուցանեմք սիրելեացդ մերոց, զի յաղագս արդեանս ժամանակի դառն բերմանց և ի մերս տարաբախտութեանց այս զարմանահրաշ սուրբ վանքս ի վաղ ժամանակաց անկեալ կայ ի ներքոյ պարտուց և նեղութեանց, չունելով մեր յայլ ուստեքէ ճար և հնար ազատութեան, միանգամայն յուսով տեառն ապաստան եղաք մեծի օգնականութեամբ քրիստոսասէր օրհնեալ հաւատացելոցդ ամենեցուն: Ուստի յերես անկեալ աղաչեմք զի ի փառս Աստուծոյ, և ի սէր գործելարարոյց սրբոյ նշանին և համենայն հրաշագործ սրբոց մասանց որք ի սուրբ վանս զետեղեալ կան զմիմեանս յորդորելով և պատճառ բարեաց լինելով լի և առատ ողորմութիւնս շնորհեսջիք և յատկապէս օգնութիւնս արասջիք ծանրաբեռն պարտուց վճարման, և զոր ինչ որ ի բարի սրտից ձերոց բղխիցէ ի խաթեր խաչեցելոյն Յիսուսի անխնայաբար շնորհեսջիք, այսինքն թէ քառասնից, թէ խոստմանց, թէ կտակս, թէ հոգեբաժինս, և թէ խաչահամբոյրս, և թէ այլ զանազան տուրս սիրապարգև ողորմութեամբ, աներկմիտ մտօք և յօժար կամօք շնորհեսջիք ի ձեռս լիշեալ հայրապետիս վարդապետիդ. զի ի նմա հասեալն ի սուրբ Աղբերկայ հրաշալի վանս հասեալ գիտասջիք: Որ և ողորմածն Աստուած զտրոց և ողորմութեանց ձերոց փոխարէն Ռ.տիկս (հաւատարատիկս—Ն. Մ.) շնորհեսցէ. զձեզ միշտ շէն և պայծառ պահեսցէ. մեղաց ձերոց թողութիւն շնորհեսցէ, զհոգիս ձեր և ննջեցելոցն ձերոց ի փառս արքայութեան հանգուսցէ. և զամենայն խնդիրս ձեր ի բարին կատարեսցէ, և փրկեալ ազատեսցէ զձեզ զամենեսեանդ յամենայն երևելի և աներևոյթ թշնամեացն փորձանաց: Այլև որքան այս գերահրաշ սուրբ վանքս սաղմոսերգութիւն, ժամ, պաշտօն և պատարագ մատչիցի յամենայնէ ձեզ և ձեր համայն ննջեցելոցն և կենդանեացն մասն և բաժին եղիցի. Ամէն:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Գ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից և ԺԱ-ից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գրեցաւ օրհնութեան կոնդակս ի թուոյս ՌՄՁԸ (1839 թ.—Ն. Մ.) սեպտեմբեր հինգն: Արդեամբ և կամեցողութեամբ Սրբոյ Երուսաղէմի բնիկ միաբան Ռափայէլ շնորհափայլ վարդապետին, ի յիշատակ սրբոյ Աղբերկայ մեծաճիրաշ վանուց: Զեռամբ մեղապարտ գրչի տիրացու Յարութիւն Ալթպարմախեան կոչեցելոյ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կոնդակի կոնակի մասում մատիտով գրված է)
Ես մշեցի Վերի թ[ա]ղցի Նազ... Մխիթարեան մէկ գումէշ մը նովիրեցի սուրբ Աղբերկան 1911 ...:

№ 356
ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թերթերը՝ 107:— **Պրակներ՝** չունի: Մակված առանձին թղթեր են, որոնք ժապավենով միացված են:— **Մեծությունը՝** 28,3×21,6×1,2 սմ.:— **Նյութը՝** բարակ և հաստարակ թուղթ:— **Կազմը՝** սկզբում և վերջում մեկական հաստարակ բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում մեկ հատ հաստարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** բոլոր թղթերի կընոնակի մասում գրություն չկա:— **Տողերը՝** անհամաչափ, 37—43:— **Գծումներ՝** չկան:—**Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Տիրայր եպիսկոպոս:— **Պատվիրատուն՝** Ամերիկայի հայոց առաջնորդության երեսփոխանական ժողովը:—**Ժամանակը՝** 3 դեկտեմբերի 1922 թ.:— **Վայրը՝** Ուստր, Մեսաչուսեց, ԱՄՆ:— **Ծանոթություն՝** ձեռագիր տեղեկագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ստորև տրվում է բովանդակության գլխավոր մասերը)

Թ. 1ա.— (Նախաբան):
Թ. 3ա.— (Առաջնորդի էությունը):
Թ. 12ա.— Առաջնորդարանի դրութիւնը:
Թ. 19ա.— Առաջնորդական այցելութիւններ:
Թ. 50ա.— Եկեղեցու ներքին կեանք:
Թ. 87ա.— Ամուսնական հարցեր:
Թ. 89ա.— Մարդահամարի խնդիր:
Թ. 90ա.— Վարչական կեանք:
Թ. 95ա.— Արտաքին յարաբերութիւն:
Թ. 103ա.— (Վերջաբան):
Թ. 105ա.— Ցուցակ 1921 թ. օգոստոս 21 Ուստր գումարուած երեսփոխանական ժողովի:
Թ. 107ա.— Ցանկ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Սկզբում գտնվող պահպանակի վրա գրված է)
Տեղեկագիր տարեկան
Առաջնորդի հայոց Ամերիկայի
Տ. Տիրայր Եպիսկոպոսի
1922, Դեկտ. 3:
Թ. 1ա.— (Թիւ) 1698
1922 Դեկտ. 3—4 տ.
«Որոց ո՛չ գոյ առաջնորդութիւն, թոթափին իրրև զտերև»:
Հոգեշնորհ Հա՛ր,
Մեծարոյ Պ. Պ. Երեսփոխանք:
Թ. 104ա.— Կամք Հայրական օրհնութեամբ և սիրով,

Տիրայր Եպիսկոպոս
Առաջնորդ Հայոց Ամերիկայի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Առաջին թերթը ներկայացնում է առաջնորդարանի նամակի թուղթը, որի վերևում տպված է հետևյալը)
Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի,
Ուստր, Մէաս.
The Prelacy of the Armenian Church in America,
65 Laurel Street, Worcester, Mass.
(Կենտրոնում կա առաջնորդարանի էմբլեման, որի վրա գրված է հետևյալը) Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի
American Diocese of the Armenian Church.

№ 357
ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թերթերը՝ 176:— **Պրակներ՝** չունի: Մակված առանձին թղթեր են, որոնք ժապավենով միացված են:— **Մեծությունը՝** 28,5×21,7×1,7 սմ.:— **Նյութը՝** բարակ և հաստարակ թուղթ:— **Կազմը՝** սկզբում և վերջում մեկական հաստարակ բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հաստարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** բոլոր թղթերի կոնակի մասում գրություն չկա:— **Տողերը՝** անհամաչափ, 36—41:— **Գծումներ՝** չկան:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Տիրայր Եպիսկոպոս:— **Պատվիրատուն՝** Ամերիկայի հայոց առաջնորդության երեսփոխանական ժողովը:— **Ժամանակը՝** 7 հոկտեմբերի 1923 թ.:— **Վայրը՝** Ուստրն, Մեսաչուսեց, ԱՄՆ:— **Ծանոթություն՝** ձեռագիր տեղեկագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

(Շարունակելի)